ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պատրաստել է _____
ուղղությամբ շրջանավարտների պատրաստվածության մակարդակի և բովանդակության մինիմումի պետական պահանջներին համապատասխան և **«ՀՌՀ ԱՌԻՄԿ» Կանոնակարգով:**

Հաստատում եմ՝
Ինստիտուտի տնօրեն_____
Արամյան Ժ.Բ.

"2" 18 հուլիսի 2023 թ.

Ինստիտուտ՝ Տնտեսագիտության և բիզնեսի

Ամբիոն՝ Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների

Հեղինակ՝ Այվազյան Քնարիկ Ավագի, տ.գ.թ., դոցենտ

ՌԻՍՌԻՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

Առարկա՝ Դրամավարկային քաղաքականություն

Մագիստրատուրայի համար

Մասնագիտացում՝ Քաղաքական տնտեսագիտություն
Ուղղություն՝ Տնտեսագիտություն

ԵՐԵՎԱՆ 2023

1.Անոտացիա

«Դրամավարկային քաղաքականություն» դասընթացը նախատեսված է «Քաղաքական տնտեսագիտություն» մասնագիտացմամբ 1 կուրսի մագիստրատուրայի ուսանողների համար և իր մեջ է ներառում դրամավարկային տեսության և դրամավարկային քաղաքականության իրականացման մի շարք խնդիրների խորացված ուսումնասիրություն և վերլուծություն: Դասընթացի համար նախատեսված է 72 ակադեմիական ժամ, որոնցից 18 ժամ՝ դասախոսությունների, իսկ 54 ժամը՝ ինքնուրույն աշխատանքի համար: Դասընթացը ավարտվում է ստուգարքով և դրա ավարտից հետո ուսանողները ստանում են 2 ակադեմիական կրեդիտ:

Դասախոսությունների ընթացքում ենթադրվում է դրամավարկային տեսության, նոր քեյնսյան տեսության շրջանակներում դրամավարկային քաղաքականության իրականացման վերլուծության իրականացում և վերջինիս ազդեցության՝ գնաճի, բիզնես ցիկլի և հասարակության բարեկեցության վրա, խորացված ուսումնասիրություն: Դասընթացի շրջանակներում նախատեսվում է նաև դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմների, դրամավարկային քաղաքականության ռազմավարությունների, ՀՀ ԿԲ-ի փորձի խորացված վերլուծություն, դասական նոր-քեյնսյան մոդելի կառուցում և մոդելի շրջանակներում դրամավարկային քաղաքականության մշակում, հնարավոր ազդեցությունների գնահատում:

2. Ուսանողների սկզբնական գիտելիքերի, կարողությունների և հմտությունների մակարդակի նկատմամբ պահանջները

Դասընթացն ուսումնասիրելու համար ուսանողին անհրաժեշտ են օտար լեզվի և համակարգչային՝ MS Office Word, Excel, Power Point, ծրագրերի իմացություն, քննադատական և համեմատական վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու ունակություններ, ինչպես նաև բազային գիտելիքներ «Մակրոտնտեսագիտություն», «Տնտեսության պետական կարգավորում» դասընթացներից:

3. Բովանդակություն

Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դրամավարկային քաղաքականությունը, որն իրականացվում է այնպիսի կենտրոնական բանկերի կողմից, ինչպիսիք են օրինակ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը, Եվրոպական կենտրոնական բանկը, հանդիսանում է գնաճի և տնտեսական աճի ապահովման հիմնական գործիք: Հայաստանում ևս, դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը հանդիսանում է ցածր և կայուն գնաճի ապահովումը:

Ճգնաժամային իրավիճակներում, օրինակ, երբ ամբողջական պահանջարկը անկում է ապրում, քաղաքականություն մշակողները էժանացնում են փողի գինը: Դրամավարկային քաղաքականությունը սովորաբար լինում է հակացիկլիկ: Սակայն, համաշխարհային

ֆինանսատնտեսական ճգնաժամը և համաճարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամը ընդգծեցին մի շարք կենտրոնական բանկերի համար պայմանական դրամավարկային քաղաքականության սահմանափակումները: Մասնավորապես, քաղաքականության տոկոսադրույքների նվազեցումը և վերջինիս զրոյական մակարդակի սահմանումը սահմանափակեցին տոկոսադրույքների հետագա նվազման և դրա հետևանքով տնտեսական վերականգման հնարավորությունները: Փաստացի զարգացումները կարևորեցին դրամավարկային քաղաքականության ոչ պայմանական գործիքների ներդրումը և զարգացումը:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմները՝ փակ և բաց տնտեսություններում, դրամավարկային քաղաքականության տարբեր ռազմավարությունները, վերջիններիս սահմանափակումները, առավելությունները և թերությունները: Նախատեսվում է զարգացնել պարզ նոր-քեյնսյան մակրոտնտեսական մոդել, գծայնացնել և լուծել Matlab միջավայրում: Այնուհետև մոդելում դիտարկել տարբեր մակրոտնտեսական շոկերի ազդեցությունները տնտեսության վրա և դրան համապատասխան իրականացվող դրամավարկային քաղաքականության արձագանքները: Նախատեսվում է քննարկել և վերլուծել ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո կիրառվող եռամսյակային կանխատեսումների մոդելը:

Դասընթացի **նպատակն է** ուսանողներին տալ խորացված գիտելիքներ՝ դրամավարկային տեսությունների և մոդելների մասին, զարգացնել նոր-քեյնսյան պարզ վերլուծական մոդել, գնահատելու իրականացվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական տարբեր փոփոխականների վրա, գտնել օպտիալ հակացիկլիկ դրմավարկային քաղաքականության արձագանքի կանոն: Դասընթացի ուսումնասիրումը թույլ կտա նաև դրամավարկային քաղաքականության վերլուծության կարողություն:

Դասընթացի ուսումնասիրման **խնդիրներն են.**

1. Հաշվի առնելով փաստացի մակրոտնտեսական իրավիճակը ցանկալի դրամավարկային քաղաքականության իրականացման առաջարկի մշակում:
2. Տարբեր երկրների կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունների մեկնաբանում:
3. Տարբեր կենտրոնական բանկերի կողմից ընտրված դրամավարկային քաղաքականության ռազմավարության և դրամավարկային քաղաքականության իրականացման այս կամ այն գործիքի կիրառման հիմնավորում:
4. Պայմանական դրամավարկային քաղաքականության իրականացման համապատասխան՝ նոր-քեյնսյան մոդելի ընտրություն և օպտիմալ դրամավարկային քաղաքականության կանոնի որոշում:

4.Առարկայի բովանդակության յուրացման մակարդակի նկատմամբ պահանջները (ինչ կարողություններ (գիտելիքներ, հմտություններ և ունակություններ) պետք է ուսանողի մոտ ձևավորված լինեն տվյալ առարկան անցնելուց ՀԵՏՈ)

Գիտելիքներ.

- Ունի դրամավարկային քաղաքականության վերաբերյալ տեսական գիտելիքներ,
- Ունի տնտեսական դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական մոդելների և գործիքների մասին գիտելիքներ,
- Ունի դրամավարկային քաղաքականության՝ գործնականում իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ,
- Գիտի տարբեր կենտրոնական բանկերի կողմից ընտրված դրամավարկային քաղաքականության ռազմավարությունների առանձնահատկությունները:

Հմտություններ՝

- Կարողանում է դասակարգել դրամավարկային քաղաքականությունների տեսակները:
- Կարողանում է մեկնաբանել տարբեր երկրների կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունները:
- Կարողանում է հիմնավորել տարբեր կենտրոնական բանկերի կողմից ընտրված դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը և դրամավարկային քաղաքականության իրականացման այս կամ այն գործիքի կիրառումը:

Ունակություններ՝

- Ունակ է դրամավարկային քաղաքականությունը քննարկել համապատասխան տնտեսական մոդելների միջոցով:
- Ունակ է համեմատականներ անցկացնել տարբեր երկրներում իրականացվող դրամավարկային քաղաքականությունների և դրանց գործիքակազմի միջև:
- Ունակ է տեսական գիտելիքները կիրառել դրամավարկային քաղաքականության միջոցառումներ մշակելիս:
- Ունակ է որոշել օպտիմալ դրամավարկային քաղաքականության կանոնը և ընտրել Պայմանական դրամավարկային քաղաքականության իրականացման համապատասխան նոր-քեյնսյան մոդել:

5. Առարկայի ծավալը և ուսումնական աշխատանքի տեսակները ըստ կիսամյակների (առարկան դասավանդվելու է 1 կիսամյակ)

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն ըստ	72

կիսամյակների, այդ թվում.	
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում:	**18**
1.1.1. Լեկցիաներ	**9**
1.1.2. Պրակտիկ պարապմունքներ, այդ թվում	**9**
1.1.2.1. Կիրառական նախագծերի քննարկում	
1.1.2.2. Քեյսեր	
1.1.2.3. Գործնական խաղեր, թրեյնինգներ	
1.1.2.4. Ստուգողական աշխատանքներ	
1.1.2.5. Այլ (նշել)	
1.1.3. Սեմինարներ	
1.1.4. Լաբորատոր աշխատանքներ	
1.1.5. Այլ տեսակներ (նշել)	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում:	**54**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	
1.2.2.Ինքնուրույն աշխաանքի այլ տեսակներ, այդ թվում (նշել)	
1.2.2.1. Գրավոր տնային աշխատանքներ	
1.2.2.2. Կուրսային աշխատանքներ	
1.2.2.3. Էսսե և ռեֆերատներ	
1.2.2.4. Այլ (նշել)	
1.3. Կոնսուլտացիաներ	
1.4. Պարապմունքների այլ մեթոդներ և ձևեր	
Եզրափակիչ ստուգում	**Ստուգարք**

6. Առարկայի ծավալի բաշխումն ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը (ակ. ժամեր)	Լեկցիա-ներ (ակ. ժամեր)	Սեմինար-ներ (ակ. ժամեր)
1	2=3+4	3	4
Ներածություն			
Թեմա 1: Կենտրոնական բանկի դերը, նշանակությունը և անկախությունը: Դրամավարկային քաղաքականության նպատակ, իրականացման ընթացք, գործիքներ և ռազմավարություններ: Որոշումների կայացման ընթացքը ՀՀ ԿԲ-ում:	2	1	1
Թեմա 2: IS-LM փոխանցումային մեխանիզմ, տնտեսական քաղաքականություններ փակ տնտեսությունում, փողի պահանջարկի տեսություններ, փողի պահանջարկի գնահատման առանձնահատկությունները ՀՀ ԿԲ-ում:	2	1	1
Թեմա 3: Տնտեսական քաղաքականությունները բաց տնտեսությունում՝ կապիտալի մոբիլության և փոխարժեքի ռեժիմի տարբեր պայմաններում: Արտաքին և ներքին հավասարակշռություն:	2	1	1
Թեմա 4: Ֆինանսական ծրագրավորման մակրոտնտեսական հայեցակարգ, ծախսերի կրճատման և փոխանցման քաղաքականություններ: Ֆինանսական ծրագրավորման կառուցվածքը, նպատակների և գործիքների ընտրությունը, իրականացման քայլեր: Ֆինանսական հոսքերի աղյուսակ:	2	1	1
Թեմա 5: Արժութային քաղաքականության տեսական հիմունքները, փոխարժեքը որպես մակրոտնտեսական անհաշվեկշռվածության կարգավորման փոփոխական, ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժութային քաղաքականության ընտրության սկզբունքները և ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը և ՀՀ տնտեսության զարգացումները:	2	1	1
Թեմա 6: Գնաճ տեսությունների զարգացում, գնաճի նպատակադրման ռազմավարություն, վերջինիս տեսակները, ռեժիմները և պայմանները: Ինչ է հայեցողականությունը: Անվանական խարիսխը և դրա անհրաժեշտությունը: Փողի ագրեգատների նպատակադրման ՀՀ փորձը:	2	1	1

Թեմա 7: Դասական նոր քեյնսյան մոդելի ներկայացում, տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կենտրոնական բանկի օպտիմիզացիոն խնդրի ներկայացում և լուծում:	**2**	**1**	**1**
Թեմա 8: Դասական նոր քեյնսյան մոդելում դրամավարկային քաղաքականության տարբեր կանոնների կիրառում և լուծում: Մոդելի սիմուլյացիա Matlab միջավայրում: Արդյունքների մեկնաբանում:	**2**	**1**	**1**
Թեմա 9: ՀՀ ԿԲ եռամսյակային կանխատեսումների մոդել:	**2**	**1**	**1**
Ընդամենը	**18**	**9**	**9**

7. Առարկայի թեմաների բովանդակությունը

Ներածություն

Թեմա 1

Կենտրոնական բանկի դերը, նշանակությունը և անկախությունը: Դրամավարկային քաղաքականության նպատակ, իրականացման ընթացք, գործիքներ և ռազմավարություններ: Որոշումների կայացման ընթացքը ՀՀ ԿԲ-ում:

Թեմա 2

IS-LM փոխանցումային մեխանիզմ, տնտեսական քաղաքականություններ փակ տնտեսությունում, փողի պահանջարկի տեսություններ, փողի պահանջարկի գնահատման առանձնահատկությունները ՀՀ ԿԲ-ում:

Թեմա 3

Տնտեսական քաղաքականությունները բաց տնտեսությունում՝ կապիտալի մոբիլության և փոխարժեքի ռեժիմի տարբեր պայմաններում: Արտաքին և ներքին հավասարակշռություն:

Թեմա 4

Ֆինանսական ծրագրավորման մակրոտնտեսական հայեցակարգ, ծախսերի կրճատման և փոխանցման քաղաքականություններ: Ֆինանսական ծրագրավորման կառուցվածքը, նպատակների և գործիքների ընտրությունը, իրականացման քայլեր: Ֆինանսական հոսքերի աղյուսակ:

Թեմա 5

Արժութային քաղաքականության տեսական հիմունքները, փոխարժեքը որպես մակրոտնտեսական անհաշվեկշռվածության կարգավորման փոփոխական, ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժութային քաղաքականության ընտրության սկզբունքները և ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը և ՀՀ տնտեսության զարգացումները:

Թեմա 6

Գնաճ տեսությունների զարգացում, գնաճի նպատակադրման ռազմավարություն, վերջինիս տեսակները, ռեժիմները և պայմանները: Ինչ է հայեցողականությունը: Անվանական խարիսխը և դրա անհրաժեշտությունը: Փողի ագրեգատների նպատակադրման ՀՀ փորձը:

Թեմա 7

Դասական նոր քեյնսյան մոդելի ներկայացում, տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կենտրոնական բանկի օպտիմիզացիոն խնդրի ներկայացում և լուծում:

Թեմա 8

Դասական նոր քեյնսյան մոդելում դրամավարկային քաղաքականության տարբեր կանոնների կիրառում և լուծում: Մոդելի սիմուլյացիա Matlab միջավայրում: Արդյունքների մեկնաբանում:

Թեմա 9

ՀՀ ԿԲ եռամսյակային կանխատեսումների մոդել:

8.Կշիռների բաշխումը մոդուլներով և ստուգման ձևերով

Ստուգման ձևերը	Ընթացիկ ստուգումների ձևերի կշիռները ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատման ներում			Միջանկյալ ստուգումների ձևերի կշիռները միջանկյալ ստուգումների գնահատման ներում			Միջանկյալ ստուգումների գնահատականների և ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում			Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականներում	Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականի և վերջնական ստուգման գնահատականի կշիռները վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում
Ուսումնական աշխատանքի/ստուգման տեսակը	M1[1]	M2	M3	M1	M2	M3	M1	M2	M3		
Ստուգողական աշխատանք											
Թեստ											
Կուրսային աշխատանք											
Լաբորատոր աշխատանքներ											
Գրավոր տնային աշխատանքներ											
Ռեֆերատ											
Էսսե											
Այլ ձևեր (նշել)											
Այլ ձևեր (նշել)											
Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները											
Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում											

[1] Ուսումնական մոդուլ

միջանկյալ ստուգումների գնահատականների կշիռները											
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 1-ին միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը											
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 2-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը											
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 3-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը											
Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում միջանկյալ քննությունների արդյունքային գնահատականի կշիռը											
Քննություն (Վերջնական ստուգման գնահատական)											(Քննություն/ Ստուգարք)
	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	Σ = 1	∑ = 1

9.Առարկայի ուսումնա-մեթոդական և նյութատեխնիկական ապահովումը.

- առարկայական ծրագիր,
- դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, թեստերի ժողովածուներ,
- էլեկտրոնային նյութեր (էլեկտրոնային գրքեր, ուսումնական ձեռնարկներ, լեկցիաների համառոտ կոնսպեկտներ, PPT պրեզենտացիաներ),

- անհրաժեշտ գրականության ցանկ,
- ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար հարցեր և հանձնարարություններ,
- թեստային առաջադրանքներ:

10.Գրականության ցանկ և տեղեկատվական ռեսուրսներ

Հիմնական գրականություն

1. **Galí J.(2008).** Monetary Policy, Inflation,and the Business Cycle. Princeton University Press Princeton and Oxford.
2. **Walsh C. (2010).** Monetary Theory and Policy. Third Edition.The MIT Press Cambridge Massachusetts
3. **Andrew B. Abel, Ben Bernanke,** Macroeconomics, Published by Addison-Wesley, 2011, chap. 12-15.
4. **Mankiw N. Gregory,** Macroeconomics, Eight Edition, Worth Publishers, 2012, chap. 15-16.
5. **Jeffrey D. Sacks, Felipe B. Larrain,** Macroeconomics in the Global Economy, Prentice-Hall. 1993, chap. 19.
6. **David Romer,** Advanced Macroeconomics, Fourth Edition, McGraw-Hill Series Economics, 2011, chap. 10-12.

Տեղեկատվական ռեսուրսներ

- www.armstat.am
- www.cba.am
- www.gov.am
- www.arlis.am
- www.minfin.am
- www.imf.org
- www.worldbank.org
- www.data.worldbank.org
- http://www.ereport.ru

11.Ընթացիկ և վերջնական ստուգման ձևեր.

Դասընթացի ավարտին ուսանողները պետք է ներկայացնեն ինքնուրույն հետազոտական աշխատանք՝ դասախոսի հետ համատեղ նախօրոք ընտրված թեմայով: Հետազոտությունը ուղարկվում է դասախոսին էլեկտրոնային փոստով՝ դասախոսի կողմից մեկնաբանություններ և դիտողություններ ստանալու նպատակով: Այնուհետև, ուսանողները, իրականացնելով համապատասխան ուղղումները. Այն ներկայացնում են

Power Point պրեզենտացիայի տեսքով, որի արդյունքներով էլ ստացվում է վերջնական գնահատականը: